74. ՍԱՐԻ ՓՈՒՉԱԽ, ՍԱԲՐԻ ՓՈՒՉԱԽ

Կէղնին իրիկմ՝ ու կնիկմ՝ ու, աղջիկ մը։ Էդոնց ապրել ուրանց քաղքի մեջ չէղնի, կէլնին կէրթան ուրիշ հ՝էրկիր մը։

Շատ ու քիչ կէրթան, ռաստ կիգան քյոշկի մը, քյոշկի չորս բոլոր բաղան էր քաշուկ։

Աղջիկ ղարկավ ան դուռ, դուռն բացվավ։ Ախչիկ մնաց ներս ու հերն ու մեր՝ դուրս։ Ինչ էրին՝ էլ չկարցան դուռ բացին։ Ախչիկ-ներս՝ լաց, հերն ու մերն էլ դուրս։ Ջարեն ուրանց կտրավ, հերն ու մեր վերուցին զուրանց ճամբուք, թողին գացին։

Ախչիկ տեսավ օր հերն ու մեր թողին գացին, ինք լէ լաց, գնաց մտավ ներս, օլըրդավ, գնաց դիվան, տեսավ օր յօթ տարվան մեռել էդ տեխ պառկուկ է։

Գնաց նստավ, ասաց՝ «Իմ ճակտի գիրն էր հըմլա գրուկ»։ Վերուց զմեռելի գլուխ դրեց չոքին ու իշքեց։

Մնաց ժում ու ժամանակըմ, թե տարեմ՝ անցավ, թե էրկու, աղջիկն ասաց. «Ես պառառ մինակ էդա տեխ նստելով, հ՝էլնիմ դուրս իշքիմ տեսնամ իսկի մարդ չը՞նցնի էդա դիով, սալըխմ՝ առնեմ իմ հոր ու մորնեռ»։

Ախչիկ հ՝էլավ դուրս, տեսավ օր բաղնի տակ որբ ախչիկըմ նստուկ է, ասաց.—Ախչի՛, դու ի՞նչ կէնիս էդ տեխ։

Ախչիկն ասաց.—Ի՞նչ կէնիմ, ես լէ որբ ենք, ընկա սարեր, ասի՝ «Էրթամ տեխըմ պահվիմ»։ Էկա ռաստ էդա տեխաց, նստա ու մանցի։

Ախչիկն ասաց.—Արի՛ իմ խեչ, դու լէ իմ հ՝ընկերն ես։

Ձախչիկն առավ ներս, զուր գլխու գալած մեկիկ-մեկիկ պատմեց աղջկան։

Ասաց թե.—Յոթ տարի պիտի զէդա մեռել պահիմ, յոթ տարին օր թըմավ, կտեսնաս օր էդա ըսդաքյան կոռծուկ է պատուհան, ինքնուրեն կշրջի վըր օռքուն, կիմնա կէլնի նստի, կառնե զիս։

Մնաց ժում ու ժամանակըմ լէ, բեսլամեն կվառեր թունդիր, հաց կէփեր, ախչիկ լէ նստուկ էր զմեռել կպահեր։ Օր մը լէ իմալ էղավ, էդ ախչիկ բեսլամին ասաց.—Արի՛ նստի, զմեռելի գլուխ դիր քու չոքին, հար ես կիգամ։

Յոթ տարին թըմելու օրն էր, բեսլամեն էկավ դրեց զմեռելի գլուխ վեր չոքին, նստավ։ Հըտ նստելուն, տղեն զարթավ, հ'էլավ նստավ, ասաց աղչկան.—Քու վիզ կոտրի, հ'որի՞ զիս զարթեցուցիր։

Ախչիկն ասաց.—Էդ լէ իմ հա՞խն է կիտաս, էդա յոթ տարի է նստեր իմ, զքու գլուխ դրեր իմ իմ ծնկան, կպահիմ, հըմկա լէ կասիս. «Քու վիզ կոտրի»։ Ես պահեր իմ զքզիկ օր զիս առնես։ Ես՝ քզիկ, դու՝ ընծիկ։

Տղեն լէ ասաց.—Թըղ էղնի։

Էդ տեխ սարըլմիշ էզան իրար, զիրար առան ու պառկան։

Ախչիկն էկավ մտավ ներս, տեսավ օր տղեն հ'իմցեր է, բեսլամեն ու ինքը փաթվեր ին իրար, պառկե։ Տփեց չոքին՝ «Հեյ վա՜խ»։

Մնաց ժում ու ժամանակըմ, տղեն հ'էլավ թուճրութենի կէրթեր։

Կնկան ասաց.—Քզիկ ի՞նչ բերիմ։

Կնիկն ասաց.—Ընծիկ կրերիս թուփըմ ուստուֆո, մեկ ատլաս, ջուխտըմ ապրջան.—վել հասըլ ինչ օր կնկան պետք կիգեր։

Բեսլամից լէ հարցուց, ասաց.—Քզիկ ի՞նչ բերիմ։

Բեսլամեն ասաց.—Ընծիկ բան պետք չէ՝ Սարի փուչախ, Սաբրի փուչախ։

Տղեն ասաց.—Ջանըմ, էդ ի՞նչ կուզիս։

Ախչիկն ասաց.—Ես զէդի կուզիմ, դու ի՞նչ լախա ունիս, դու գիմ հ'ուզած բի։

Տղեն հ'էլավ գնաց թուճրութենի։ Մնաց ժում ու ժամանակըմ, դարձավ էկավ։ Բերեց զամեկու հ'ուզած տվեց ուրեն. կնկա հ'ուզածները՝ կնկան, բեսլամի ուզածն էլ՝ ուրեն։

38—276

Ախչիկն է, առավ Սարի փուշախ, Սարրի փուշախ, մտավ հ'ոդեն։

Տղեն լէ կանավ դուռ ու անկաճ կէներ։

Ախչիկն է, վերուց ասաց.—Սարի փուշախ, Սարրի փուշախ, ես էնք, հերմ' ու մերմ', շատ ու քիչ էկանք, զիս անլեծած են, ասած են՝ յոթ տարվա մեռելի թուշ հ'իգամ. էկանք, էկանք քյոշկիմ' ռաստ, բաղան քաշուկ էր բոլոր։ Իմ հեր զարկվավ, դուռ չբացվավ, իմ մեր զարկվավ՝ չբացվավ, ես զարկվա՝ բացվավ։ Իմ հեր ու մեր մանցին դրրսու դին, ես մանցի ներսու դին։ Էնդոնք ջանդարդի էզան, թողին գացին, ես լացի, էկա մտա դիվանմ' տեսա օր յոթ տարվան մեռել պառկուկ է, վերցի զգլուխ դրի չոքիս ու նստա պահեցի։ Սարի փուշախ, Սարրի փուշախ, ե՞ս պատռիմ, չէ՞ դու։ Օրուց մեկ, էմ լէ,—ասաց ախչիկն,—հ'էլա դուրս, տեսա օր խեղճ ախչիկրմ նստուկ է բաղնի տակ, ասի. «Ախչի, հ'ո՞րին ես նստե հ'ոդի»։ Ասաց. «Ի՞նչ էնիմ չնստիմ, էթում իմ, բռնի զէդ ճամբախ, էկա նստա հ'ոդա»։ Ասի. «Քու դարդ լէ իմ դարդերուց, էկո մեկտեղ ապրինք, ես լէ յոթ տարվան մեռելի իմ թուշ էկի»։ Բերի զաղչիկ, էնի կեներ բեսլամութին, ես լէ զմեռել կպահենք։ Սարի փուշախ, Սարրի փուշախ, պատռիմ ե՞ս, չէ՞ դու։ Օրըմ' լէ իմալ էղավ, ես էլա դուրս, ասի. «Ախչի՛, արի զէդա մեռելի գլուխ դիր քու չոքին, հար ես հ'իգամ»։ Բեսլամեն է, կիգա նստի, զգլուխ կդնե չոքին, չդնե, դու մ'ասի մեռելի վախտն էլ թմեր էր, ստաքյան կըդառնա վըր ուր օռաց ու մեռել կէլնի նստի, աղչկան կասե. «Քու վիզ կոտրի, զիս հ'որի հ'իմցուցիր»։ Ախչիկն կվերու կասե. «Տնաշեն, էդա յոթ տարի է, օր զքզիկ կպահեմ, բալքիմ հ'էլնիս առնես զիս»։ Ըդ տեղ փաթվան իրարու, պառկան. Սարի փուշախ, Սարրի փուշախ, ե՞ս պատռիմ, չէ՞ դու։ Ես էկա մտա ներս, տեսա օր տղեն հ'իմցեր է, փաթվեր է բեսլամեն ու պառկե, առած են զիրար, ես լէ տրփի իմ չոքերուն, դարցա հ'ետևանց։ Հըմկա Սարի փուշախ, Սարրի փուշախ, դո՞ւ պատռիս, չէ՞ ես։

Օր ասաց՝ «Սարի փուշախ, Սարրի փուշախ՝ պատռավ իրարուց»։

Տղեն պատվտեր էր, անկաճ կէներ, եր Սարի փուշախ ու Սարրի փուշախ պատռան իրարուց, դուռ բացեց, մտավ ներս։

Ախչկան ասեց.—Դու ընծիկ, ես լէ՝ քզիկ։

Առան նոր զիրար, հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնեք ձըր մուրազին։